

վրայ խօսած ատենիս՝ իսկ այս Տըր-
դատայ թագը բոլորովին նորաձեւ զար-
մանալի թագ է . վրայի ականակապ
խաչերէն յայտնի է՝ որ քրիստոնէու-
թեան ատեն դրած թագն է . ձեւքիչ
մը կը նմանի արև մուեան կայսերաց թա-
գին : Կոստանդիանոս՝ Դաշանց թղթին
մէջ կ'ըսէ . “Պատակեցաք զմեծ աղքայս
” Տըրդատ կայսերական թագիւ մերով,
” լուսատու ակամք յօրինեալ և մեծա-
” մեծ մարդարտով շրջապատեալ . . .
այս թագին վրայ ալ կ'երենան անթիւ
ակունք և մարդարիտք , և մեծամեծ
լուսատու աղամանդք , բայց ասոնք բա-
ւական չենք կրնար սեպել հաստատե-
լու թէ Կոստանդիանոսի տուած թագն
է այս , որովհետեւ Կոստանդիանոսի
պատկերաց վրայ ասոր նման թագ ըլ-
կայ , և ոչ ալ ուրիշ տեղ տեսեր ենք :
” ատ նշանաւոր է թագին բերանը
անկիւնաւոր ձեռվ , և իբր ականջնե-
րով լըմընցած , որ հայկական թագը կը¹
յիշեցընէ . բացուածքին լայնքն ալ կը²
ցուցընէ որ Տըրդատայ պէս հսկայակերպ
գլխի մը համար է այս թագս . վրայի
հարստութիւններն ալ անբաւ և անդին
կ'երենան . թագին երեսն ալ անշուշտ
ոսկի թիթեղով պատած պիտի ըլլայ :

” այս կարծ տեղեկութենէս վերջը
նորէն կը յայտնենք փափագնիս հայրե-
նասէր ազգայնոց , որ մեզի անշափ հա-
ճութիւն է , թէ որ ասոր և ասոր նը-
ման բանի մը վրայ հետաքնին տեղե-
կութիւն մը գտնեն և տան . մանա-
ւանդ որոնք որ բնիկ հայրենեաց մէջ
են , և հին եկեղեցեաց պատկերները
և աւանդները կրնան քննել . թերևս
այն ցանկալի և ստոյգ տեղեկութիւն-
ները բարեխառնեն մեր հառաջանքը ,
որ միշտ կը կանչէ

ՖՈՒՐ ԱՐՏԱՍՈՒԱՑ ԱՉԱՑ ՈՎ ՏԵՑ
ՈՂԲԱԼ Ը. ԹԱԳԱՎՈՒՄ ԱՑՍ ՏՐԴԱՏԱՑ :

1 հատ . Զ . 277 .

Հ . Պ . Ս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂ ՋՈՒԹԻՒՆ

” արժման ու հանգստէան իրեռանիւնը և
օգուագները :

ՄԱՐԴՈՒՄ կազմուածքը աղէկ մը
քննելով՝ գրեթէ ամէն երևելի բժիշկք
հաստատեր են , թէ շարժմունքը և եր-
բեմն երբեմն ինչուան նաև ցնցմունքն
ալ ամենահարկաւոր և օգտակար բա-
ներ են մեզի . վասն զի ասոնք են կ'ը-
սեն որ մեր սրտին ու ըղեղին ջղաց
շարժմունքները կը կանոնաւորեն , մաղ-
ձը կը փարատեն , մարմինը ուժով և
տոկուն կը պահէն , և այլն : Բայց որով-
հետեւ տեսակ տեսակ շարժմունք կրնայ
ըլլալ , հոս խօսինք իւրաքանչիւր տեսակ
շարժման առանձին օգուտներուն վրայ :

Ա . Կառագուշ երեալ : Ի՞ս տեսակ շարժ-
ման օգուտը շատ կախում ունի կառ-
քին շինուածքէն . վասն զի ան տեսակ
կառքերը որ առածգական զսպանակնե-
րու վրայ կը քալեն , կառքին ցնցմունքը
շատ կորսընցընելով՝ գրեթէ խիստ քիչ
օգուտ կ'ընեն մէջի նստողին . ինչպէս
նաև կառքին շուտ կամ անհաւասար
ընթացքն ալ մեծ տարբերութիւն կ'ը-
նէ շարժման կողմանէ . բայց հասարակօ-
րէն ալ կառքին շարժմունքը միշտ քիչ
օգուտ կ'ընէ և ան ալ աւելի տկարնե-
րու , ուրիշ տեսակ շարժմունք ընելու
անկարողներու , ծերերու , կանանց և
նորաբոյժ հիւանդներու . օգուտը աւե-
լի կրնայ ազգել թէ որ մէկը աս տեսակ
շարժմունքով քիչ մը զօրանալէն ետեւ ,
սկսի ուրիշ շարժմունքներ ալ ընելու :
Ոտքով ձամբորդութեան զարմանալի
օգուտներն ալ , ինչպէս նաև վազե-
լուն , շուտ շուտ քալելուն և այլն , աս
տեսակ շարժմանց կարգը կը սեպուին :

Բ . Դահի՝ կամ պատգարակէ՝ շարժմունք
Դահի կամ պատգարակի շարժմունք

կ'ըսուի ան որ մէկը գահի , աթոռակի , կամ ինչ և իցէ բանի մը վրայ նստելով՝ ուրիշները զինքը ուսերնուն վրայ առած տանին : Ի՞ս գործողութիւնս ամենեին շարժման օգտակարութիւնը չունի . բայց թէ որ մարդկանց տեղ ուղտերու վրայ հաստատուած ըլլայ աս բանիս համար շինուած նստարանը՝ ան ատենը շատ աւելի օգտակար կրնայ ըլլայ աս տեսակ շարժմունքն ալ . վասն զի ուղ տը քալելու ատեն շատ աւելի կը ցնցէ վրայի բեուրքան թէ մարդ :

Գ . (շովային ճամբորդութիւն : Ի՞ս գործողութիւնս ալ տեսակ մը շարժման կը թութիւն կրնայ սեպուիլ տեղոյն , ատենին և զանազան պատահած դիպուածներուն նայելով : Ի, աւակը գետի ջրին ընթացքին տալով դարուվար սահիլը թէպէտ առողջարար բան է՝ բայց որովհետեւ մարդուս մարմինը նոյն միջոցին մէջ ամենեին շարժմունք մը չգգար , շատ աւելի առողջարար կ'ըլլայ աս շարժմունքը թէ որ մէջի նստողն ալ թի քաշելով մասնաւոր շարժմունք մը ընէ :

(շովային ճամբորդութիւնը մեծ ազդեցութիւն ունի նաև մարդկային մտաց վրայ ալ . վասն զի ան ահագին ընդարձակ ու խորունկ ծովն ու ալիքները , յորձանքներն ու մրրիկները որ կը պատահին՝ կ'ընկճեն մեր տկար մըտքին չափաւորութիւնն ու վախկոտութիւնը . մաքուր ու զով օդը որ կը ծըծենք , կերակրեղինաց փոփխութիւնը , նաւուն արագընթաց կամ դանդաղ շարժմունքը և այլն , աշխատութեանցը հետ գրեթէ ամէն տեսակ վնասակար ու ջղային հիւանդութիւններէ միշտ ազատ կը պահեն զմարդ . ինչպէս որ յայտնի փորձով կը տեսնուի գրեթէ բոլոր նաւաստեաց վրայ որ առողջ , ուժով , դիմացկուն , թեթեաշարժ մարդիկ են , թէպէտ և տեղէ տեղ երթալով զանազան օդային փոփխութեանց մէջ կը մտնեն :

Խառն շարժմանց էրթութիւն :

ԽՍԱՌՆ շարժմամբ կը թութիւն կ'ըսուի ան՝ որ մարդս բաց ՚ի արտաքին շարժողի մը շարժելէն՝ ինքն ալ ուրիշ նոր շարժմունք մը կ'ընէ . աս տեսակ շարժմունք են ,

և . ՚ Ձէ հեծնալը : ՚ Ձին բնական քայլուածքովն ալ ընդհանրապէս շարունակ կը ցնցէ վրայի նստողը . և որովհետեւ հաւասարակշութիւն պահելու համար հարկ է որ հեծնողը ինքիրմէ ալ ցնցուի , ուրեմն ասով կը պատճառէ ահաւասիկ կրկին ցնցմունք ինչպէս որ վերը ըսինք , և աս ցնցման սաստկութիւն կամ տկարութիւնը կը կախուի ձիուն արագ կամ կամաց ընթացքէն , մեծ կամ պղտիկ առած քայլերէն , երկրին որպիսութենէն , հեծնողին վարպետութենէն ու ձիուն հեղ կամ կատաղի բնաւորութենէն : Ի՞ս կը թութիւնը թէպէտ շատ օգտակար է՝ բայց սաստիկ ցուրտ կամ տաք ատեն ամենեին պէտք չէ ընել : ՚ հեծնալու յարմար ժամանակ է աշնան առաւօտներն ու իրիկունները , ձմեռուան մէջ ալ կէս օրուան միջոցները : ՚ Նասակար և անտանելի բան է հովին դէմձիա վարելը . նոյնպէս խիստ դժուար առանց թամբի՝ հեծնալը : ՚ Վ որ կուշտ փորով ձի կը հեծնայ՝ պէտք է շատ զգուշութիւն ընէ . սաստիկ վազցընելէն՝ ինչպէս նաև երկայն ժամանակ ձի հեծնալէն , որուն վնասներն ու վտանգները անպակաս և յայտնի են ամենուն : ՚ Կ մաղմաղին խառնուածք ունեցողներու , ախոնդանոտներու՝ , յանկարծական թանչերու և այլն , շատ հարկաւոր և օգտակար բան է ստէպ ձի հեծնալը , որ արտաշնչութեամբ և ցնցմամբ այսպիսիներուն արեան շրջանները կը բանայ :

՚ Խու վրայ հեծնալը թոյլ ու դիւրին կը թութիւն մըն է և աւելի տկար ու փափուկ կազմուածք ունեցողներու պատշաճ և օգտակար , զոր օրինսակ տրղոց , կանանց և նորաբոյժ հիւանդներու , և այլն :

Բ. Դօմանոցի՝ շարժում։ Այս շարժումը մարդուս աղիքները կը ցնցէ ու կը հաստատէ, և մկանունքը կը զօրացընէ։ բայց ամեննեին լաւ բան չէ անմիջապէս կերակրէ ելած ճօճանոցով օրուիլը։ վասն զի անմարսողութիւն ու ինչուան փախել կը պատճառէ։ Այս տեսակ կը թութենէն միշտ պէտք է զգուշանան անոնք որոնց որ և իցէ ժամանակ ըլլայ՝ ճօճանոցը գլխու պտոյտ և սիրտիսառնուք կը պատճառէ։

Ա' ականը՝ և ասոր նման խաղերը իբրև բժշկական շարժմունք ալ առնելով՝ այնչափ օգտակար բաներ չեն։ վասն զի այնպիսի կարգէ գուրս արագ շարժմունքները շատ անգամ ինչուան մարդուն ըղեղին կրնան վնաս բերել։ դարձեալ շատ անգամ անմարսողութիւն, սիրտիսառնուք և փախել ալ կը պատճառէն։

Երան շարժմանց կը թութեան տակ կը կը սեպուին նաև բարձր ձայնով կարգալը, երգելը ու պոռալը, և այլն։ որոնք մեր շնչարանին վրայ շատ կամ քիչ իրենց օգուտը կ'ազգեն։ որով կուրծքը կը զօրանայ ու երակներուն արիւնը հանգիստ իրեն շրջանը կ'ընէ։ բայց աս տեսակ կը թութիւններուն՝ միշտ որոշեալ ժամանակի մէջ և քիչ ատեն պէտք է ետևէն ըլլալ։ վասն զի ասոնց զեղծմունքէն շատ անգամ կը պատահի փոշտանկութիւն, անընդհատ սիրտիսառնուք, և արիւնը գլուխը զարնել, և այլն։ Այս տեսակ կը թութենէն պիտի զգուշանան տկար կուրծքով, փափուկ և հիւանդութենէ նոր ելած մարդիկ։ Իսկ թոթովները՝ շատ անգամ բարձր ձայնով երգելով, պոռալով և կարդարով իրենց թոթովութեանը մերդարման կ'ընեն։

1 Սաւակ-
2 Ճերտ-:

3 Տեղուկ-:
4 Փելու-:

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Ա էրտի արիւն դարձեցնելու պարզ հնաբաններ։

Ա էրդի մը արիւնը դադրեցնելու համար շատ օգտակար և դիւրին կերպեր հնարած են։ օրինակի համար՝ կը ընանք վէրքին վրայ դնել մէկէն սպունգ, սարդիստայն, ծամած կամ թրջած թուղթ, հին լաթի կտորներ, կտաւ, բուրդ, և թէ որ ուրիշ բան չգտնուի։ կրնանք ինչուան լոռ ալ գործածել։ Բայց ամենէն օգտակարն է աղէկ չորցած սպունգ դնելը, որ կը ծծէ արիւնը ու վէրքին բերանը կ'ամփոփի։ Բայց այս իննամբը ընելէն առաջ հարկաւոր է վէրքին երեսը պատած արիւնը լուալ պաղ ջրով ինչուան որ աղէկ մը երենայ վէրքին բերանը։ Ոյէ որ սաստիկ ըլլայ վէրքին արիւնը ու ձեռքով բռնելով ալ չգաղրի՝ պէտք է նոյն անդամը որուն վրայ վէրքն է՝ վերէն կապել։ զոր օրինակ թէ որ ձեռքին վրայ է վէրքը, թեր աղէկ կապել սխմելով, որ ասով սրտին հետ արեան հաղորդակցութիւնը քիչ մը կը կտրուի ու արիւնը կը դադրի։ նոյնպէս վէրքն ալ կրնանք կապել սխմելով բաւական է սաստիկ ցաւ չիտայ։

Այս ալ գիտնալու բան մըն է որ եթէ մէկը արիւն առնէ ու կապը թոյլ ըլլալով կամ աղէկ կապած ըլլալով վէրքը բացուի ու արիւնը սկսի վազել, պէտք է լուալ վէրքը զգուշութեամբ ու աղէկ մը կապել։ նոյնպէս տղրուկի վէրքերը որ երբեմն բացուելով շատ վնաս կը բերեն։ իսկ թէ որ վերի դրած հնարքներուն օգուտը տեսնես՝ վէրքին վրայ ցանէ ածուխի փոշի կամ պաղեղ ու սպունգի կտոր մը ոգեղէն հեղուկի մը մէջ թաթիւնելով քաշ վրան։ Ա իրաբոյժները երբեմն կը ստիպուին դժոխաբարով, կամ տաքցուցած երկաթով մը այրել վէրքը որ ամփոփուի։

Ա էրք ունեցողը ջերմացուցիչ բաներ

1 Ճերտակ բառ-: